ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԹԵՄԱ[1]

Հոդված 6 § 1 (քաղաքացիաիրավական հայեցակետ)

Սահմանադրական դատարանի վարույթները

(վերջին թարմացումը՝ 28.02.2025թ.)

Ներածություն

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը դրա քաղաքացիաիրավական հայեցակետով կիրառելի է Սահմանադրական դատարանի վարույթների նկատմամբ, եթե դրանք կապված են «քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները որոշվելու» հետ (*Պիեռ-Բլոքն ընդդեմ Ֆրանսիայի* [Pierre-Bloch v. France], 1997թ., § 48, *Ֆոգենռայտերն ընդդեմ Գերմանիայի* [Voggenreiter v. Germany], 2004թ., §§ 30-33, *Ալբուկերկ Ֆեռնանդեշն ընդդեմ Պորտուգալիայի* [Albuquerque Fernandes v. Portugal], 2021թ., § 54, «*Քսերո Ֆլոր Լեհաստան» ՍՊԸ-ն ընդդեմ Լեհաստանի* [Xero Flor w Polsce sp. z o.o. v. Poland], 2021թ., §§ 192-209, *Պինկասը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի* [Pinkas and Others v. Bosnia and Herzegovina], 2022թ., §§ 37-38, և համեմատաբար վերջերս կայացված՝ *Լորենսո Բրագադոն և այլք ընդդեմ Իսպանիայի* [Lorenzo Bragado and Others v. Spain], 2023թ., § 106, որը վերաբերում է խորհրդարանի կողմից Դատական իշխանության նոր գլխավոր խորհուրդ նշանակելու գործընթացը շարունակաբար ձախողելու վերաբերյալ թեկնածուների վերջնական ցուցակում ընդգրկված

[1] Կազմվել է Քարտուղարության կողմից: Դատարանի համար պարտադիր ուժ չունի: Սույն թարգմանությունը կատարվել է Եվրոպայի խորհրդի «Աջակցություն սահմանադրական արդարադատության զարգացմանը Հայաստանում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան» ծրագրի շրջանակներում՝ Եվրոպայի խորհրդի Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2023-2026 թվականների ծրագրի ներքո:

մագիստրատների կողմից ներկայացված սահմանադրական (amparo) բողոքին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ այս վարույթները կարող են զգալիորեն տարբերվել սովորական դատական վարույթներից, Դատարանը ստիպված էր համապատասխանեցնել 6-րդ հոդվածի 1-ին կետի վերաբերյալ իր նախադեպային իրավունքի համաձայն մշակված սկզբունքները, ինչպես նաև սահմանել նոր սկզբունքներ: Այս սկզբունքները համընդհանուր կիրառություն ունեն, թեև Սահմանադրական դատարանի իրավասությունները տարբեր պետություններում կարող են տարբեր լինել:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ սույն առանցքային թեման չի վերաբերում այլ վերադաս դատարանների վարույթներին, ինչպիսիք են գերագույն դատարանների վարույթները կամ վերաքննիչ դատարանների վարույթները:

Գործող նախադեպային իրավունքից բխող սկզբունքները

Դատարանի մատչելիությունը

- 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված երաշխիքները ներառում են դատարան ներկայացրած հարցի վերաբերյալ վերջնական որոշում ստանալու իրավունքը, այդ թվում՝ սահմանադրական բողոքի ընդունելիության և (կամ) էության վերաբերյալ որոշումը (*Մարինին ընդդեմ Ալբանիայի* [Marini v. Albania], 2007թ., § 120):
- Սահմանադրական դատարանը, որը կարող է վիճարկվող վարույթը քննել միայն Սահմանադրությանը դրա համապատասխանության տեսանկյունից՝ առանց բոլոր համապատասխան փաստերն ուսումնասիրելու, չի համարվում 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով լիակատար իրավասություն ունեցող (*Մալհոուսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության [ՄՊ]* [Malhous v. the Czech Republic [GC]], 2001թ., § 62, *Ցումտոբելն ընդդեմ Ավստրիայի* [Zumtobel v. Austria], 1993թ., § 30):
- 6-րդ հոդվածով չի երաշխավորվում օրենսդրի կողմից ընդունված օրենքն անվավեր ճանաչելու կամ չեղարկելու լիազորություն ունեցող դատարանի մատչելիության իրավունքը: Այդ դրույթից չի կարող բխել նաև անհատի իրավունքը՝ խթանելու օրենքի սահմանադրական վերանայման վերաբերյալ խորհրդարանական մարմնի որոշումը (*Գյուլումյանը և այլք ընդդեմ Հայաստանի* (որոշում) [Gyulumyan and Others v. Armenia (dec.)], 2023թ., § 79):

- Հաշվի առնելով Սահմանադրական դատարան բերված բողոքի հատուկ բնույթը՝ Դատարանն ընդունել է, որ այդ դատարանի մատչելիության պայմանները կարող են խիստ լինել (*Առիբաս Անտոնն ընդդեմ Իսպանիայի* [Arribas Antón v. Spain], 2015թ., § 50, տե՛ս նաև *Պինկասը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի* [Pinkas and Others v. Bosnia and Herzegovina], 2022թ., § 48 և *Օլիվարես Սունյիգան ընդդեմ Իսպանիայի* [Olivares Zúñiga v. Spain], 2022թ., § 29)՝ իրավական որոշակիությունը և դատական համակարգի աստիճանակարգության ամենաբարձր մակարդակում սահմանադրական արդարադատության պատշաճ իրականացումը երաշխավորելու համար (*Դուշ Սանտուշ Կալադուն և այլք ընդդեմ Պորտուգալիայի* [Dos Santos Calado and Others v. Portugal], 2020թ., §§ 112 և 133, *Ալբուկերկ Ֆեռնանդեշն ընդդեմ Պորտուգալիայի* [Albuquerque Fernandes v. Portugal], 2021թ., §§ 68 և 75, և *Չելան ընդդեմ Ալբանիայի* [Çela v. Albania], 2022թ., § 23):
- Սահմանադրական դատարանի մատչելիության սահմանափակումների համաչափությունը որոշելիս պետք է հաշվի առնել երեք գործոն, մասնավորապես՝ i) արդյոք բողոքարկման եղանակները կարելի է կանխատեսելի համարել դատավարության կողմի տեսանկյունից, ii) արդյոք տվյալ անձը ստիպված է եղել ավելորդ բեռ կրել վարույթի ընթացքում կատարված ընթացակարգային սխալների պատճառով, և iii) արդյոք քննարկվող սահմանափակումները կարող են համարվել «ավելորդ ձևականություն» (*Դուշ Սանտուշ Կալադուն և այլք ընդդեմ Պորտուգալիայի* [Dos Santos Calado and Others v. Portugal], 2020թ., §§ 113-116, *Ալբուկերկ Ֆեռնանդեշն ընդդեմ Պորտուգալիայի* [Albuquerque Fernandes v. Portugal], 2021թ., § 69):

Անաչառությունը

- Սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատումները նույնպես կիրառվում են Սահմանադրական դատարանի վարույթների նկատմամբ (*Մեժնարիչն ընդդեմ Խորվաթիայի* [Mežnarićv. Croatia], 2005թ., §§ 29-32):

Վարույթի արդարությունը

- Մրցակցային վարույթի իրավունքը կարող է նաև կիրառվել Սահմանադրական դատարանում քննվող վարույթների նկատմամբ (*Միլատովան և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Milatová and Others v. the Czech

Republic], 2005թ., § 59):

- Սահմանադրական դատարանի կողմից դիմումատուին իր գործը քննող ընդհանուր իրավասության դատարանների գրավոր դիտարկումների մասին չտեղեկացնելու համատեքստում Դատարանը վճռել է, որ իր նախադեպային իրավունքի հիմքում ընկած՝ կողմերի իրավահավասարության և վարույթի արդարության սկզբունքները պետք է դիտարկել որպես Սահմանադրական դատարանի նկատմամբ պահանջ, որ այն իր որոշման մեջ հստակ նշի նման որոշում կայացնելու պատճառները բոլոր այն դեպքերում, երբ այն որոշում է, որ անհրաժեշտություն չկա վարույթի կողմերից մեկի դիտարկումների մասին տեղեկացնել մյուս կողմերին (*Յանաչեկն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Janáček v. the Czech Republic], 2023թ., § 53):
- Երբ Սահմանադրական դատարանի վարույթները վերաբերում են անձանց առնչությամբ ընդունված (*ad personam)* օրենսդրությանը, տվյալ անձանց համար պետք է երաշխավորվի մյուս մասնակիցների դիտարկումներին ազատ հասանելիություն և այդ դիտարկումները մեկնաբանելու իրական հնարավորություն (*Ռուիս-Մատեոսն ընդդեմ Իսպանիայի* [Ruiz-Mateos v. Spain], 1993թ., § 63, տե՛ս ի հակադրություն՝ *Գոռաիս Լիսառագան և այլք ընդդեմ Իսպանիայի* [Gorraiz Lizarraga and Others v. Spain], 2004թ., §§ 56-61):
- Այն դեպքում, երբ առկա է գործը Սահմանադրական դատարան ուղարկելու նախնական մեխանիզմ, գործն ուղարկելու այդ խնդրանքը ներպետական դատարանի կողմից մերժվելը կարող է որոշակի հանգամանքներում խախտել վարույթի արդարությունը, օրինակ՝ եթե մերժումը պատշաճ կերպով չի պատճառաբանվել (*Շալտինիտեն ընդդեմ Լիտվայի* [Šaltinytė v. Lithuania], 2021թ., § 88, «*Քսերո Ֆլոր Լեհաստան» ՍՊԸ-ն ընդդեմ Լեհաստանի* [Xero Flor w Polsce sp. z o.o. v. Poland], 2021թ., §§ 166):
- 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված երաշխիքները ներառում են դատարանների, սահմանադրական դատարանների՝ իրենց որոշումների համար բավարար պատճառաբանություններ ներկայացնելու պարտավորությունը, մասնավորապես՝ այն դեպքում, երբ նրանց կողմից քննվող գործը վերաբերում է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներին և ազատություններին (*Պաուն Յովանովիչն ընդդեմ Սերբիայի* [Paun Jovanović v. Serbia], 2023թ., §§ 105-109) կամ դատական համակարգի անկախության երաշխիքներին (*Օվչարենկոն և Կոլոսն ընդդեմ Ուկրաինայի* [Ovcharenko and Kolos v. Ukraine], 2023թ., § 126) կամ նոր

կամ հազվագյուտ հարցերի, որոնց վերաբերյալ դրանց կիրառելիության առնչությամբ հաստատված դատական պրակտիկա առկա չէ (*Լորենսո Բրագադոն և այլք ընդդեմ Իսպանիայի* [Lorenzo Bragado and Others v. Spain], 2023թ., §§ 143-148):

Հանրային լսումը

- Երբ Սահմանադրական դատարանի վարույթները սահմանափակվում են սահմանադրական հարցերի քննությամբ և ենթադրում են իրավունքի հարցերի գնահատում, վարույթի որոշիչ փուլում հանրային լսումների անցկացումը բավարար է 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխանելու համար (*Գրացինգերը և Գրացինգերովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (որոշում) [Gratzinger and Gratzingerova v. the Czech Republic (dec.) [ՄՊ]], 2002թ., § 82):
- Սահմանադրական վերացական վերանայման վարույթի շրջանակներում պետություններից չի պահանջվում ապահովել, որ յուրաքանչյուր շահագրգիռ անձ դատարանում լսվի (*Գավելլան ընդդեմ Խորվաթիայի (որոշում)* [Gavella v. Croatia (dec.)], 2006թ.):
- Երբ Սահմանադրական դատարանը, գործելով որպես առաջին և միակ ատյանի դատարան, քննում է կոնկրետ գործ, պետք է անցկացվի բանավոր լսում, եթե առկա չեն բացառիկ հանգամանքներ, որոնք կարդարացնեն բանավոր լսում չանցկացնելը (*Սելմանին և այլք ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [Selmani and Others v. the former Yugoslav Republic of Macedonia], 2017թ., §§ 36-43):

Վարույթի տևողությունը

- Սահմանադրական դատարանի վարույթները պետք է հաշվի առնվեն վարույթի տևողության ողջամտությունը գնահատելիս, երբ արդյունքը կարող է ազդել սովորական դատարաններում քննվող վեճի ելքի վրա (*Ռուիս-Մատեոսն ընդդեմ Իսպանիայի* [Ruiz-Mateos v. Spain], 1993թ., §§ 35, *Զյուսմանն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ] [Süßmann v. Germany [GC]], 1996թ., § 39, *Բիելինսկին ընդդեմ Լեհաստանի* [Bieliński v. Poland], 2022թ., § 47):
- Եթե Սահմանադրական դատարանի կողմից քննվող վարույթը սովորական վարույթի մաս է կազմում, օրինակ, երբ ներպետական դատարանները

համապատասխան դրույթի սահմանադրականության հարցն ուղարկում են Սահմանադրական դատարան, ապա դրա կողմից վարույթը կարող է այս կամ այն չափով կարևոր լինել 6-րդ հոդվածին հիմնական վարույթի համապատասխանությունը գնահատելիս (*Պոլյախը և այլք ընդդեմ Ուկրաինայի* [Polyakh and Others v. Ukraine], 2019թ., §§ 186-192): Այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանի՝ գործերը ողջամիտ ժամկետում լսելու պարտավորությունը չի կարող մեկնաբանվել նույն կերպ, ինչ սովորական դատարանի դեպքում (*Զյուսմանն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ], [Süßmann v. Germany [GC]], 1996թ., §§ 56-58):

- Սահմանադրական դատարանի՝ որպես Սահմանադրության պահապանի դերն այդ դատարանի համար հատկապես անհրաժեշտ է դարձնում, որ այն կարողանա հաշվի առնել գործերը ցուցակում մուտքագրելու զուտ ժամանակագրական կարգից բացի այլ նկատառումներ, ինչպես օրինակ՝ գործի բնույթը և դրա կարևորությունը քաղաքական և սոցիալական տեսանկյուններից (*Ա.Տ.-ն ընդդեմ Սլովենիայի (որոշում)*, [A.T. v. Slovenia (dec.)], 2022թ., § 21, և դրա սահմանափակումները, տե՛ս *Օրշուշը և այլք ընդդեմ Խորվաթիայի* [ՄՊ] [Oršuš and Others v. Croatia [GC]], 2010թ., § 109):

Ուշագրավ օրինակներ

Դատարանի մատչելիությունը

- *Ֆեռե Խիսբերտն ընդդեմ Իսպանիայի* [Ferré Gisbert v. Spain], 2009թ.՝ Սահմանադրական տրիբունալ բողոք ներկայացնելու ժամկետը հաշվարկելիս պետք է հիմնվել «*dies a quo*» (ամսաթիվը՝ սկսած որից) արտահայտության սահմանափակող մեկնաբանության վրա (խախտում).
- *Կլաուսեկերն ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [Klausecker v. Germany (dec.)], 2015թ.՝ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի մատչելիության սահմանափակումները՝ Եվրոպական արտոնագրային գրասենյակում աշխատանքի ընդունման կարգը վերանայելու համար, ողջամիտ այլընտրանքային ընթացակարգի (արբիտրաժ) հասանելիության պայմաններում (անընդունելի).

- *Դուշ Սանտուշ Կալադուն և այլք ընդդեմ Պորտուգալիայի* [Dos Santos Calado and Others v. Portugal], 2020թ.՝ ավելորդ ձևականության դրսևորում օրենսդրական պահանջներին անհամապատասխանության համար սահմանադրական բողոքներն անընդունելի հայտարարելիս: *Զուբաքն ընդդեմ Խորվաթիայի [ՄՊ]* [Zubac v. Croatia [GC]], 2018թ., գործում շարադրված՝ Գերագույն դատարանի վարույթների վերաբերյալ նախադեպային իրավունքի սկզբունքների կիրառումը Սահմանադրական դատարանի վարույթների նկատմամբ (գանգատներից երկուսի մասով տեղի է ունեցել խախտում, երրորդ գանգատի մասով խախտում տեղի չի ունեցել).
- *Ալբուկերկ Ֆեռնանդեշն ընդդեմ Պորտուգալիայի* [Albuquerque Fernandes v. Portugal], 2021թ.՝ ավելորդ ձևականություն չի դրսևորվել կարգապահական պատիժը վիճարկող դատավորի կողմից ընթացակարգային հիմքերով սահմանադրական բողոքը մերժելիս (խախտում տեղի չի ունեցել).
- *Դրագան Կովաչևիչն ընդդեմ Խորվաթիայի* [Dragan Kovačević v. Croatia], 2022թ.՝ դիմումատուին իրավունակությունից զրկելու վերաբերյալ Սահմանադրական դատարան բերված բողոքի համար ծախսերը հատուցելու անհամաչափ մերժում (խախտում).
- *Չելան ընդդեմ Ալբանիայի* [Çela v. Albania], 2022թ.՝ սահմանադրական բողոքի մերժում բողոքը ներկայացվելուց հետո ներդրված նոր ժամկետի (երկու տարուց նվազեցում մինչև չորս ամսվա) անկանխատեսելի կիրառման պատճառով (խախտում).
- *Օլիվարես Սունյիգան ընդդեմ Իսպանիայի* [Olivares Zúñiga v. Spain], 2022թ.՝ սահմանադրական (*amparo*) բողոքը հայտարարվել է անընդունելի իրավական պաշտպանության նախորդ միջոցը սպառելու անկանխատեսելի պահանջի հետևանքով (խախտում).
- *«Սուպերգրավ Ալբանիա» ՍՊԸ-ն ընդդեմ Ալբանիայի* [Supergrav Albania Shpk v. Albania], 2023թ.՝ դիմումատուի սահմանադրական բողոքի մերժումն այն հիմքով, որ այն բերվել է Բարձրագույն դատարանի որոշումն ընդունվելու ամսաթվից հետո հաշվարկված չորսամսյա ժամկետից հետո և ոչ այն ամսաթվից

հետո, երբ հանձնվել է ամբողջական պատճառաբանված որոշումը (խախտում).

- *Լորենսո Բրագադոն և այլք ընդդեմ Իսպանիայի* [Lorenzo Bragado and Others v. Spain], 2023թ.՝ Խորհրդարանի կողմից Դատական իշխանության նոր գլխավոր խորհուրդ նշանակելու գործընթացը շարունակաբար ձախողելու դեմ թեկնածուների վերջնական ցուցակում ընդգրկված մագիստրատների կողմից ներկայացված սահմանադրական (*amparo*) բողոքի մերժումը՝ որպես ժամկետի խախտմամբ ներկայացված և առանց գործն ըստ էության քննելու (խախտում).

- *Ժառն ընդդեմ Ֆրանսիայի* [Jarre v. France], 2023թ.՝ դիմումատուների հայցը մերժվել է վարույթի քննության ընթացքում Սահմանադրական դատարանի կողմից այն դրույթն ուժը կորցրած ճանաչող որոշումն ընդունվելուց հետո, որը հիմք էր ծառայել դիմումատուների հայցի համար (խախտում տեղի չի ունեցել).

- *Գյուլումյանը և այլք ընդդեմ Հայաստանի (որոշում)* [Gyulumyan and Others v. Armenia (dec.)], 2023թ.՝ Սահմանադրական դատարանի դատավորների և նախագահի՝ բոլորը ցմահ պաշտոնավարմամբ, պաշտոնավարման ժամկետի դադարեցումը՝ դատական վերանայման ոչ ենթակա սահմանադրական փոփոխությունների միջոցով (անընդունելի՝ առարկայական առումով (*ratione materiae)* անհամատեղելի):

Անաչառությունը

- *Շտեկ Ռիշը և այլք ընդդեմ Լիխտենշտայնի* [Steck-Risch and Others v. Liechtenstein], 2005թ.՝ Սահմանադրական դատարանի դատավորի անաչառությունը փոքր երկրում, որտեղ դատական համակարգը գործում է ոչ լրիվ աշխատաժամանակով, և որտեղ նույն անձինք որպես դատավորներ և գործող իրավաբաններ կատարում են կրկնակի գործառույթներ (խախտում տեղի չի ունեցել).

- *Շվարցը և Կավնիկն ընդդեմ Սլովենիայի* [Švarc and Kavnik v. Slovenia], 2007թ.՝ Սահմանադրական դատարանի դատավորի անաչառությունը, որն առաջին ատյանի դատարանի քաղաքացիական վարույթում գործել է որպես դիմումատուի հակառակորդի իրավական փորձագետ (տեղի է ունեցել խախտում).

- *Բելլիցին ընդդեմ Մալթայի* [Bellizzi v. Malta], 2011թ.՝ անաչառության

ենթադրյալ բացակայություն, երբ Սահմանադրական դատարանի նախագահի օգնականը նույն գործով նախորդ քաղաքացիական վարույթում գործել է կողմերից մեկի կողմից (խախտում տեղի չի ունեցել).

- *Դուշ Սանտուշ Կալադուն և այլք ընդդեմ Պորտուգալիայի* [Dos Santos Calado and Others v. Portugal], 2020թ.՝ ընդունելիության մասին որոշման դեմ ներկայացված առարկությունը քննող՝ Սահմանադրական դատարանի՝ երեք դատավորի կազմով կոմիտեի անաչառությունը՝ այդ որոշումն ընդունած զեկուցող դատավորի ներկայությամբ պայմանավորված (անընդունելի).
- *Շերին ընդդեմ Մալթայի* [Scerri v. Malta], 2020թ.՝ Սահմանադրական դատարանի այն երեք դատավորների անաչառության ենթադրյալ բացակայությունը, որոնք նախկինում եղել են այն Վերաքննիչ դատարանի անդամ, որը որոշում է կայացրել դիմումատուի բողոքի, ինչպես նաև սահմանադրականությունը որոշելու մասին նրա միջնորդության վերաբերյալ (տեղի է ունեցել խախտում).
- *Խորվաթիայի գոլֆի ֆեդերացիան ընդդեմ Խորվաթիայի* [Croatian Golf Federation v. Croatia], 2020թ.՝ այն դատավորի անաչառության ենթադրյալ բացակայությունը, որը եղել է Սահմանադրական դատարանի՝ երեք դատավորի կազմով կոլեգիայի անդամ՝ չնայած նրան, որ գոլֆի ակումբի նախագահի կինն էր, որի նկատմամբ դիմումատու միավորումը հարուցել է կատարողական վարույթ (խախտում):

Օրենքի հիման վրա ստեղծված տրիբունալը

- «*Քսերո Ֆլոր Լեհաստան» ՍՊԸ-ն ընդդեմ Լեհաստանի* [Xero Flor w Polsce sp. z o.o. v. Poland], 2021թ.՝ Սահմանադրական դատարանի դատավորներից մեկը, որը քննել էր դիմումատու ընկերության սահմանադրական բողոքը, չէր ընտրվել ներպետական օրենսդրությանը համապատասխան: *Գուդմունդուր Անդրի Աստրադսոնն ընդդեմ Իսլանդիայի [ՄՊ]* [Guðmundur Andri Ástráðsson v. Iceland [GC]], 2020թ., գործով ձևակերպված եռաստիճան գնահատումը կիրառվել էր Սահմանադրական դատարանի կողմից քննվող քաղաքացիական գործի նկատմամբ (խախտում):

Վարույթի տևողությունը

- *Ֆոն Մալցանը և այլք ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [ՄՊ], [Von Maltzan and Others v. Germany (dec.) [GC]], 2005թ.՝ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանում քննվող այն վարույթների տևողության ռեժիմը, որոնք կապված են կոմունիզմի ժամանակաշրջանում օտարումների հետ՝ Գերմանիայի վերամիավորման եզակի համատեքստում (անընդունելի).
- *Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի* (որոշում) [Janković v. Croatia (dec.)], 2000թ.՝ Հարավսլավիայի ժողովրդական բանակի՝ թոշակի անցած սպայի համար զինվորական կենսաթոշակի հետ կապված սահմանադրական վարույթի տևողությունը, որը ներառում էր բարդ իրավական հարցեր նախկին Հարավսլավիայի փլուզման համատեքստում (անընդունելի).
- *Օրշուշը և այլք ընդդեմ Խորվաթիայի [ՄՊ]* [Oršuš and Others v. Croatia [GC]], 2010թ.՝ Սահմանադրական դատարանում քննվող վարույթի՝ ավելի քան չորս տարի տևողությունը (խախտում).
- *«Փրոջեքթ Թրեյդ» ՍՊԸ-ն ընդդեմ Խորվաթիայի* [Project-Trade d.o.o. v. Croatia], 2020թ.՝ մասնավոր բանկում դիմումատու ընկերության բաժնեմասերի չեղարկման և վերադարձի վերաբերյալ Սահմանադրական դատարանում քննվող վարույթի գրեթե հինգ տարի տևողությունը (խախտում).
- *Շորազովան ընդդեմ Մալթայի* [Shorazova v. Malta], 2022թ.՝ սահմանադրական իրավունքների վերականգնման վարույթի՝ գրեթե հինգ տարի տևողությունը երկու ատյաններում չափազանց երկար չէ գործի կոնկրետ հանգամանքներում (խախտում տեղի չի ունեցել).
- *Ա.Տ.-ն ընդդեմ Սլովենիայի (որոշում)* [A.T. v. Slovenia (dec.)], 2022թ.՝ Սահմանադրական դատարանում քննվող վարույթի՝ շուրջ երեք տարի և մեկ ամիս տևողությունը չափազանց երկար չէ՝ հաշվի առնելով կշեռքի նժարին դրված հարցերի բարդությունը (անընդունելի):

Լրացուցիչ հղումներ

Եվրոպայի խորհուրդ

- Սահմանադրական արդարադատություն՝ Վենետիկի հանձնաժողովի և սահմանադրական դատարանների միջև համագործակցություն

ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՀՂՈՒՄՆԵՐԸ

Նախադեպային գործ

- *Ռուիս-Մատեոսն ընդդեմ Իսպանիայի* [Ruiz-Mateos v. Spain], 1993 թվականի հունիսի 23, շարք Ա թիվ 262 (խախտում).
- *Զյուսմանն ընդդեմ Գերմանիայի [ՄՊ]* [Süßmann v. Germany [GC]], 1996 թվականի սեպտեմբերի 16, *Վճիռների և որոշումների մասին զեկույցներ* 1996-IV (խախտում տեղի չի ունեցել).
- *Պիեռ-Բլոքն ընդդեմ Ֆրանսիայի* [Pierre-Bloch v. France], 1997 թվականի հոկտեմբերի 21, *Վճիռների և որոշումների մասին զեկույցներ* 1996-IV (6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի չէ).
- *Միլատովան և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Milatová and Others v. the Czech Republic], թիվ 61811/00, ՄԻԵԴ 2005-V (խախտում).
- *Ալբուկերկ Ֆեռնանդեշն ընդդեմ Պորտուգալիայի* [Albuquerque Fernandes v. Portugal], թիվ 50160/13, 2021 թվականի հունվարի 12 (խախտում տեղի չի ունեցել).
- «*Քսերո Ֆլոր Լեհաստան» ՍՊԸ-ն ընդդեմ Լեհաստանի* [Xero Flor w Polsce sp. z o.o. v. Poland], թիվ 4907/18, 2021 թվականի մայիսի 7 (խախտում):

Այլ գործեր 6-րդ հոդվածի շրջանակներում

- *Դոյմլանդն ընդդեմ Գերմանիայի* [Deumeland v. Germany], 1986 թվականի մայիսի 29, շարք Ա թիվ 100 (խախտում).
- *Ցումտոբելն ընդդեմ Ավստրիայի* [Zumtobel v. Austria], 1993 թվականի սեպտեմբերի 21, շարք Ա թիվ 268-Ա (խախտում տեղի չի ունեցել).
- *Պամելն ընդդեմ Գերմանիայի* [Pammel v. Germany], 1997 թվականի հուլիսի 1, *Վճիռների և որոշումների մասին զեկույցներ* 1997-IV (խախտում).
- *Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի* (որոշում) [Janković v. Croatia (dec.)], թիվ 43440/98, ՄԻԵԴ 2000-X (անընդունելի՝ ակնհայտ անհիմն).
- *Մալիոուսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության [ՄՊ]* [Malhous v. the Czech Republic [GC]], թիվ 33071/96, 2001 թվականի հուլիսի 12 (խախտում).

- *Գրացինգերը և Գրացինգերովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (որոշում) [ՄՊ] [Gratzinger and Gratzingerova v. the Czech Republic (dec.) [GC]], թիվ 39794/98, ՄԻԵԴ 2002-VII (անընդունելի՝ ակնհայտ անհիմն).
- *Նիեդերբյոշտերն ընդդեմ Գերմանիայի* [Niederböster v. Germany], թիվ 39547/98, ՄԻԵԴ 2003-IV (քաղվածքներ) (խախտում).
- *Ֆոգենռայտերն ընդդեմ Գերմանիայի* [Voggenreiter v. Germany],, թիվ 47169/99, ՄԻԵԴ 2004-I (քաղվածքներ) (խախտում).
- *Գոռաիս Լիսառագան և այլք ընդդեմ Իսպանիայի* [Gorraiz Lizarraga and Others v. Spain], թիվ 62543/00, ՄԻԵԴ 2004-III (խախտում տեղի չի ունեցել).
- *Ֆոն Մալցանը և այլք ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [ՄՊ], [Von Maltzan and Others v. Germany (dec.) [GC]], թիվ 71916/01 և 2 այլ գործեր, ՄԻԵԴ 2005-V (անընդունելի՝ ակնհայտ անհիմն).
- *Շտեկ-Ռիշը և այլք ընդդեմ Լիխտենշտայնի* [Steck-Risch and Others v. Liechtenstein], թիվ 63151/00, 2005 թվականի մայիսի 19 (խախտում).
- *Մեժնարիչն ընդդեմ Խորվաթիայի* [Mežnarić v. Croatia], թիվ 71615/01, 2005 թվականի հուլիսի 15 (խախտում).
- *Գավելլան ընդդեմ Խորվաթիայի* (որոշում) [Gavella v. Croatia (dec.)], թիվ 33244/02, ՄԻԵԴ 2006-XII (քաղվածքներ) (անընդունելի՝ ակնհայտ անհիմն).
- *Պրոնինան ընդդեմ Ուկրաինայի* [Pronina v. Ukraine], թիվ 63566/00, 2006 թվականի հուլիսի 18 (խախտում).
- *Շվարցը և Կավնիկն ընդդեմ Սլովենիայի* [Švarc and Kavnik v. Slovenia], թիվ 75617/01, 2007 թվականի փետրվարի 8 (խախտում).
- *Մարինին ընդդեմ Ալբանիայի* [Marini v. Albania], թիվ 3738/02, 2007 թվականի դեկտեմբերի 18 (խախտում).
- *Օլույիչն ընդդեմ Խորվաթիայի* [Olujić v. Croatia], թիվ 22330/05, 2009 թվականի փետրվարի 5 (խախտում).
- *Գասպարին ընդդեմ Սլովենիայի* [Gaspari v. Slovenia], թիվ 21055/03, 2009 թվականի հուլիսի 21 (խախտում).
- *Ֆեռե Խիսբերտն ընդդեմ Իսպանիայի* [Ferré Gisbert v. Spain], թիվ 39590/05, 2009 թվականի հոկտեմբերի 13 (խախտում).
- *Օրշուշը և այլք ընդդեմ Խորվաթիայի [ՄՊ]* [Oršuš and Others v. Croatia

[GC]], թիվ 15766/03, ՄԻԵԴ 2010 (խախտում).

- *Պակսասն ընդդեմ Լիտվայի [ՄՊ]* [Paksas v. Lithuania [GC]], թիվ 34932/04, ՄԻԵԴ 2011 (քաղվածքներ) (6-րդ հոդվածը կիրառելի չէ).
- *Կյուբլերն ընդդեմ Գերմանիայի* [Kübler v. Germany], թիվ 32715/06, 2011 թվականի հունվարի 13 (խախտում).
- *Բելլիցին ընդդեմ Մալթայի* [Bellizzi v. Malta], թիվ 46575/09, 2011 թվականի հունիսի 21 (խախտում տեղի չի ունեցել).
- *Կլաուզեկերն ընդդեմ Գերմանիայի* (որոշում) [Klausecker v. Germany (dec.)], թիվ 415/07, 2015 թվականի հունվարի 6 (անընդունելի՝ ակնհայտ անհիմն).
- *Առիբաս Անտոնն ընդդեմ Իսպանիայի* [Arribas Antón v. Spain], թիվ 16563/11, 2015 թվականի հունվարի 20 (խախտում տեղի չի ունեցել).
- *Սելմանին և այլք ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [Selmani and Others v. the former Yugoslav Republic of Macedonia], թիվ 67259/14, 2017 թվականի փետրվարի 9 (խախտում).
- *Աջարը և այլք ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [Acar and Others v. Turkey (dec.)], թիվ 26878/07 և թիվ 32446/07, 2017 թվականի դեկտեմբերի 12 (անընդունելի՝ ակնհայտ անհիմն).
- *Առոսպիդե Սարասոլան և այլք ընդդեմ Իսպանիայի* [Arrozpide Sarasola and Others v. Spain], թիվ 65101/16 և 2 այլ գործեր, 2018 թվականի հոկտեմբերի 23 (խախտում).
- *Ֆրայլե Իտուռալդեն ընդդեմ Իսպանիայի* (որոշում) [Fraile Iturralde v. Spain (dec.)], թիվ 66498/17, 2019 թվականի մայիսի 7 (անընդունելի՝ ակնհայտ անհիմն).
- *Գրեյս Գաթն ընդդեմ Մալթայի* [Grace Gatt v. Malta], թիվ 46466/16, 2019 թվականի հոկտեմբերի 8 (խախտում).
- *Պոլյախը և այլք ընդդեմ Ուկրաինայի* [Polyakh and Others v. Ukraine], թիվ 58812/15 և 4 այլ գործեր, 2019 թվականի հոկտեմբերի 17 (խախտում).
- *Ալմինովիչն ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [Alminovich v. Russia (dec.)], թիվ 24192/05, 2019 թվականի հոկտեմբերի 22 (6-րդ հոդվածը կիրառելի չէ).
- *Դուշ Սանտուշ Կալադուն և այլք ընդդեմ Պորտուգալիայի* [Dos Santos Calado and Others v. Portugal], թիվ 55997/14 և 3 այլ գործեր, 2020 թվականի մարտի

31 (գանգատներից երկուսի մասով դատարանի մատչելիության հետ կապված խախտում, մյուս գանգատի մասով խախտում տեղի չի ունեցել, ակնհայտ անհիմն՝ անաչառության մասով).

- *Շերին ընդդեմ Մալթայի* [Scerri v. Malta], թիվ 36318/18, 2020 թվականի հուլիսի 7 (խախտում).
- «*Փրոջեքթ-Թրեյդ» ՍՊԸ-ն ընդդեմ Խորվաթիայի* [Project-Tade d.o.o. v. Croatia], թիվ 1920/14, 2020 թվականի նոյեմբերի 19 (խախտում).
- *Խորվաթիայի գոլֆի ֆեդերացիան ընդդեմ Խորվաթիայի* [Croatian Golf Federation v. Croatia], թիվ 66994/14, 2020 թվականի դեկտեմբերի 17 (խախտում).
- *Շալտինիտեն ընդդեմ Լիտվայի* [Šaltinytė v. Lithuania], թիվ 32934/19, 2021 թվականի հոկտեմբերի 26 (խախտում).
- *Դրագան Կովաչևիչն ընդդեմ Խորվաթիայի* [Dragan Kovačević v. Croatia], թիվ 49281/15, 2022 թվականի մայիսի 12 (խախտում).
- *Բիելինսկին ընդդեմ Լեհաստանի* [Bieliński v. Poland], թիվ 48762/19, 2022 թվականի հուլիսի 21 (խախտում).
- *Շորազովան ընդդեմ Մալթայի* [Shorazova v. Malta], թիվ 51853/19, 2022 թվականի մարտի 3 (խախտում տեղի չի ունեցել).
- *Ա.Տ.-ն ընդդեմ Սլովենիայի* (որոշում) [A.T. v. Slovenia (dec.)], թիվ 20952/21, 2022 թվականի սեպտեմբերի 20 (անընդունելի՝ ակնհայտ անհիմն).
- *Պինկասը և այլք ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի* [Pinkas and Others v. Bosnia and Herzegovina], թիվ 8701/21, 2022 թվականի հոկտեմբերի 4 (խախտում տեղի չի ունեցել).
- *Չելան ընդդեմ Ալբանիայի* [Çela v. Albania], թիվ 73274/17, 2022 թվականի նոյեմբերի 29 (խախտում).
- *Օլիվարես Սունյիգան ընդդեմ Իսպանիայի* [Olivares Zúñiga v. Spain], թիվ 11/18, 2022 թվականի դեկտեմբերի 15 (խախտում).
- *Օվչարենկոն և Կոլոսն ընդդեմ Ուկրաինայի* [Ovcharenko and Kolos v. Ukraine], թիվ 27276/15 և թիվ 33692/15, 2023 թվականի հունվարի 12 (խախտում).
- *Յանաչեկն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [Janáček v. the Czech Republic], թիվ 9634/17, 2023 թվականի փետրվարի 2 (խախտում).
- *Պաուն Յովանովիչն ընդդեմ Սերբիայի* [Paun Jovanović v. Serbia], թիվ

41394/15, 2023 թվականի փետրվարի 7 (խախտում).

- *«Սուպերգրավ Ալբանիա» ՍՊԸ-ն ընդդեմ Ալբանիայի* [Supergrav Albania Shpk v. Albania], թիվ 20702/18, 2023 թվականի մայիսի 9 (խախտում).
- *Լորենսո Բրագադոն և այլք ընդդեմ Իսպանիայի* [Lorenzo Bragado and Others v. Spain], թիվ 53193/21 և 5 այլ գործեր, 2023 թվականի հունիսի 22 (խախտում).
- *Գյուլումյանը և այլք ընդդեմ Հայաստանի (որոշում)* [Gyulumyan and Others v. Armenia (dec.)], թիվ 25240/20, 2023 թվականի նոյեմբերի 21 (անընդունելի՝ առարկայական առումով (*ratione materiae)* անհամատեղելի).
- *Ժառն ընդդեմ Ֆրանսիայի* [Jarre v. France], թիվ 14157/18, 2024 թվականի փետրվարի 15 (խախտում տեղի չի ունեցել):